



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





1851



1999



7:2

ԲԱՆ ԻՐԱՏԱԿԱՆ

Տ. ՅԱԿՈԲԵԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒԹ

ԵՒ ՊԱՏՐԻԱՐքի ԿԱՌԱՋԱԴԱՎՈՒՄ

ՀԵՅ ՀՅՈՒՐԵՆ ԵԿԵԼԵՑԱԿԱԽՍ ԵՒ ՀԱՅՈՎՈՒՄ

Ը ԶԴԻՄ ՀՅԱՅՑ ՈՒ ԵԿԵԼԵՑ



ԼԵՂ

969

ՀԱՅՈՎՈՒՄ

Տ. ՄԻՏՈՀԵՆՏՈՒՄԵԱՆ

• 1851 •



Առաջնակ Հայոց  
ԹՈՒՂՔ

ԿԵՐԱԾԵՎ ԲԵՆՏՑ

(113)

Առ ԱՄԵԼԱՅՆ ՀՈԳԵՏՈՐ ԱԽԱԶՆՈՐԴՍ  
ԵՒ ԱՌ ՀԱՄԱՅՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՍՍ  
ԿԱՐԳԱԿՈՐԸՑ ՀՈՎՈՒԱՑ ԵԿԵՂԵՑՏՈՅՑ  
ԵՒ ԱՌ ԱՇԽԱՐՀՈՒԿ ԻՇԽԱՆՍ  
ԵՒ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՐԴՏՍ

ՀԱՐԱՔԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԱՇԽԱՏԱՍՏՐՈՒԹԵԱՄԲ  
ՏԱԿՈՐԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՊԱՏՐՈՒԹԵԱ  
ՏԱՅՐԱՔԱՆԱՔԻՍ ԿՈՍՏԱՆՈՒՊՈԼԾՈՅՑ

(Կյանք ընդ գրութառ և ընդ աշխարհաբառ.)

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1851 ՅՈՒՆՎԱՐ Դ  
Ի ՊԱՏՐՈՒԹԵԱՐԱՆԻ ԱՄԵԼԱՅՆ ՀԱՅՈՑ  
Ի ԿՈՍՏԱՆՈՒՊՈԼԾՈՅՑ, Ի ԽՈՒՄԻԱՓՈՒ

==

ՏՊԵԱԼ ՎԵՐՍՏՆ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄՏՏՀԵՆՏՈՍԵԱՆ

43798 - Ա. Հ.

ԵԿԱՏԵՐԻՆՈՎԱ

ԽՈՎԱՅՐԻ ՎԱՐԴԱՐ ՅԱՅՈՒՄ  
ՍԱՄՎԵՐ ԸՆՎԵՐ ՅԱՅՈՒՄ  
ԵՎ ԱՅՐԵՐ ԸՆՎԵՐ ՅԱՅՈՒՄ  
ԲԱՐՎԵՐ ԸՆՎԵՐ ՅԱՅՈՒՄ  
ԿՐՎԵՐ ԸՆՎԵՐ ՅԱՅՈՒՄ


Օ աստվածական երիկ-ըլ- և շնչացեա-  
ւաշը նոր տող-լետմբ =  
Բնիալուս- զլուս նոր զէ դ' բարկասի տէր,  
և կունչեցի ՚ի ճանապարհույն արտարու-լետն =  
(Սաշ. ԳԼ. Է. հմբ 11 և 12) :



28. 971

28147-62

(969. Ա)



Ո պաշտօնակից հոգեկցորդ հարազատ  
 մեր սիրելիք, արտասուօք աղաչեմք  
 առ մի մի իւրաքանչիւր հոգեւոր Դէտ-  
 սլոր : Օ ի ուշի ուշով կշռելով զվտանգա-  
 ւոր բերմունս ժամանակիս՝ ըստ այնմ վա-  
 րեսչիք . նախ՝ Կո.աջնորդացդ պէտք է աշ-  
 խատիլ տքնիլ յամենայն վիճակս ձեր՝ և  
 յամենայն դիւզօրէս անգամ դպրոցս  
 հաստատել . զբրիստոնէական վարդապե-  
 տութիւն և զբարոյականութեան կրթու-  
 թիւն տալ տղայոց լաւապէս . և երբեմ-  
 նակի անձամբ շրջիլ յամենայն վիճակս  
 ձեր . ոչ վասն հաւաքելոյ դդրամս , այլ  
 վասն այցելութիւնս առնելոյ սրբոց Լ-  
 կեղեցեաց՝ և ժողովրդոց՝ և դպրատանց .  
 իմանալ զիւրաքանչիւրոց զվարս և զշարժ-  
 մունս , և ուղղել զամենայն և բարեկար-  
 գել . պատուիրել եկեղեցականաց ժիր՝

արթուն՝ և զգաստ մնալ՝ ի վերայ հոգեւոր պաշտամանց իւրեանց . չժողուլ ըդքահանայս ըստ կամաց իւրեանց աստ և անդ շրջել, և մարմնաւոր գործոց հետեւիլ՝ զժողովուրդն անխնամ թողլով զուրկ ՚ի հոգեւոր մխիթարութեանց . հոգ տանիլ՝ զի ուսանիցին ուղիղ և ծանր խաչակընքել ամենայն ումեք, զի և իւրաքանչիւր ոք զնոյն հոգ կալցեն զաւակաց և ընտանեաց իւրեանց : Առածին երախայից կոչել անուն՝ զանուանս տօնելի Արբոց ՚ի մկրտութեան նոցա . և զօտար ազգաց և զանքան կենդանեաց և զայլ պէս պէս ականց և ծաղկանց անպէտ անուանս չըկոչել ՚ի վերայ տղայոց և աղջկանց ՚ի սուրբ Ակրտութեանն . և յանուն մկրտեալ երախայից տումար հաստատել՝ ուր և չիցէ . զի անյապաղ գրեսցեն ՚ի նմա զանուն երախային՝ և զհօրն՝ և զկնքահօրն՝ և զմըկրտիչ քահանային՝ և զտարին ամսաթըւովմ :

Այլ և երբեմն պարտ է ժողովս առնել քահանայից, և հարցափորձ լինիլ ՚ի կարեւոր գործս, և հոգեւոր խօսակցութիւնս առնել ընդ նոսա . զպարագայս խօստովանութեան և այլ բարեկարգութեանց աւանդել նոցա, և միշտ աշխա-

տեցուցանել զԵկԵղԵցականսն ուսանիլ,  
և ուսուցանել իւրեանց ժողովրդոց զսք  
կրօնս քրիստոնէութեան՝ և զանբիծ վա-  
րըս առաքինութեան։ Անհոգութիւն բո-  
լորովին ՚ի բաց կացցէ յանձանց ձերոց,  
նոր ՚ի նորոյ զարիութեան ոգի զգենլով  
միտ դնել զանձնիւր անձանց որպիսու-  
թենէ, զվարդապետաց՝ զքահանայից՝ և  
զամենայն եկԵղԵցական դասուց՝ եւս և  
զիշխանաց՝ և զառ հասարակ բոլոր ժողո-  
վրդոց մեծաց և փոքունց՝ արանց և կա-  
նանց՝ ծերոց և տղայոց՝ և ամենայն չափու  
հասակի և վիճակի բոլոր վիճակայնոցդ  
համայնից։ որպէս զի ամենայն ոք արթ-  
նութեամբ հոգ ունիցին ՚ի վերայ պաշ-  
տամանց իւրեանց։ Այս յամենայն տե-  
ղիս վիճակիդ՝ թէ և սակաւաթիւ ևս ի-  
ցեն, շահեցող և ընտիր քահանայս կար-  
դել։ առանց քահանայի գիւղ և տեղի ըր-  
թողուլ։ նոյնպէս դպրատուն հաստատել  
և եկԵղԵցի ունիլ նոցա ջանացէք։

Օ այսոսիկ գրելով առ ձեզ եղբարք,  
մի կարծէք՝ թէ նոր ինչ ուսուցանեմք ձեզ,  
այլ ցանկամք ազատիլ ՚ի պարտականու-  
թենէ, որպէս զի և դուք գրելոցս գոր-  
ծադիր լինելով՝ ազատիցէք ՚ի պարտակա-  
նութենէ ձերմէ։ վասն զի շուրջ պատ-

եալ են զմեօք Թշնամիքն սուրբ Եկեղեց-  
 ւոյ մերոյ . ապա և մեզ հովուացս հոկել  
 պարտ է՝ 'ի վերայ բանաւոր հօտին Քրիս-  
 տոսի , և չոտալ Թոյլ գայլոց երբեք յա-  
 փըստակել զմի ոք 'ի մերոցն 'ի հօտէն Քր-  
 իստոսի . զի ժողովուրդ մեր յամենայն  
 տեղիս 'ի վիճակ աղքատութեան են , մի-  
 այն հոգեւորականքս մխիթարելոց եմք ըզ  
 նոսա . ուստի աղաչեմք առաւել ծանրու-  
 թիւնինչ ոչ տալով ժողովրդոց , աղահու-  
 թիւն երբեք գործ չածելով , և խնայու-  
 թեամբ վարելով՝ վասն տրոց չընեղել ըզ  
 նոսա , այլ նեղ նուազ ապրելով չափաւո-  
 րել զկենցաղավարութիւնս մեր . զի մի ժո-  
 ղովուրդք մեր ծանրաբեռնեալ նեղիցին՝ և  
 վշտասցին 'ի կարգաւորացս , այլ մեծութիւ-  
 րութիւն և մխիթարութիւն և աղահո-  
 վութիւն գտանելով 'ի մէնջ , լուիցեն ձայ-  
 նի բարի խրատուց մերոց , և օր քան զօր  
 բարեպաշտացեալ , լցուսցեն զմարմնաւոր  
 պիտոյս մեր . ապա թէ ոչ՝ զրկիմք յամե-  
 նայն բարեաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ .  
 ուրեմն հոգասցուք զամբողջութիւն աղ-  
 գիս չկորուսանել , և ջանասցուք իբրեւ  
 հաւ ընդ թեովք մերովք ժողովել զամ-  
 ազգս մեր , և աղատ պահել 'ի պէս պէս  
 չարեաց աղանդաւորաց սիրայորդոր բա-

նիւք և համոզական ազդու քարոզութեա  
մերով . զի մեղ հոգեւորականացս յատուկ  
լինի յանցանքն , եթէ յետ այսորիկ չար  
օրինակաւ մերով գայթակղութեան պատ-  
ճառ ինչ տայցեմք ժողովրդոց մերոց , թէ  
անհոգութեամբ՝ թէ բանիւ՝ թէ շարժ-  
մամբ՝ և թէ ինչ և իցէ ընչաքաղց կըիւք :

Վ արդապետք զազդու քարոզս և զքա-  
րոյական բարի խրատս խօսեսցին . և Հայ-  
ատանեայցս սուրբ Ակեղեցւոյ ուղղա-  
փառութեան ջատագով գտցին , չք լինի  
թէ պակաս խօսք մը հակառակ վարդա-  
պետութեան մերս սրբոյ Ակեղեցւոյ խօ-  
սեսցին՝ և գայթակղեցուսցեն զժողովուր-  
դըն . այլ զոր ինչ դաւանութիւն ունիմք  
՚ի սրբազան Առաքելոց և ՚ի սրբոյ Առսա-  
ւորչէն մերմէ , և զամենայն ծէսս և զկը-  
րօնս աստուածպաշտութեան և զսրբազան  
կանոնս աւանդեալս մեղ ՚ի նոցանէ ըն-  
դունիլ և քարոզել . յաջ և յահեակ չխո-  
տրելով հաստատել զնոցին հաւատոյ վար-  
դապետութիւնսն . և զիղձս ընչասիրու-  
թեան և զիշխանասիրութեան ՚ի բաց հե-  
ռացուցեալ յանձանց՝ ազգասիրական ե-  
ռանդով իբրեւ քաջ զօրական և զօրա-  
պետ՝ զինու Քրիստոսի սպառազինեալ,  
վահանաւ հաւատոյ և սուսերաւ բանին

Կոտուծոյ քաջալերեսցեն զժողովուրդն՝  
և զանձինս եւս օրինակ բարի դնելով ա-  
ռաջի աչաց նոցա :

Ապաքէն կարգաւորք սրբոյ Եկեղեց-  
ւոյ մանաւանդ Առաջնորդք զիւրեանց վի-  
ճակն՝ մէկ տան ընտանիք և զաւակունք  
պարտին համարել ինքեանց . որպէս տա-  
նուտէր մի պարտական է հոգալ զիւր  
տունն, 'ի հիւանդանալ ընտանեացն տրտ-  
միլ և սգալ, և յամենայն զօրութենէ ջա-  
նալ դարման տանիլ՝ դեղ և ճարակ դտա-  
նել և առողջացուցանել, և ոչ խնայել ըզ  
ծախս դրամոց և ոչ զաշխատութիւնս .  
Նոյնպէս և ամենայն հոգեւոր Առաջնորդք  
պարտին հայրական գթովք իւրաքանչիւր  
անհատ անձանց վրայ հոգ մեծ ունիլ. և  
երբէք ամայի և անխնամ չթողուլ զնոսա ,  
հոգեւորապէս դարմանել և առողջացու-  
ցանել, և այն : Ո՞իշտ ՚ի միտս իւրեանց  
տպաւորելոց են Հոգեւորականք, թէ մեք  
հոգալոց եմք զժողովուրդն՝ և ոչ նոքա ըզ  
մեղ . հովիւն հովուէ զոշխարն, և ոչ ոչ  
խարն զհովիւն . մեք արածելով ՚ի վայրի  
դալարւոջ և ՚ի ջուրս հանգստեան ուղ-  
ղափառ վարդապետութեան սնուցանե-  
լոց եմք զնոսա հոգեւոր մխիթարութիք  
և բարի խրատուք, և ապա ՚ի ժամանաւ

կին զարիւնն չհանելով՝ միայն չափաւու-  
բապէս կթել դկաթն և խռողել զասրն .  
առ այս կարդա՛ և 'ի միտ առ զիշկէ կիէլի  
մարգարէութիւնն , և սրբոյն Պօղոսի ա-  
ռաքելոյ թուղթոն :

Օ այս եւս գրեմ առ հարազատ սիրե-  
լիսդ իմ, զի որովհետեւ սուրբ Անեղեց-  
ւոյ մերոյ հաստատութիւնն և պայծառու-  
թիւնն բանիքուն և բարեկրօն վարդապե-  
տօք է՝ և լինի . ապա Ապիսկոպոսունք և  
Առաջնորդը և ամենայն ծերունի Վարդա-  
պետք 'ի վանորայս մերս ազդի՝ ուր ուրեք  
և իցեն՝ թէ իշխանութեամք և թէ անիշ-  
խանութեամք , զդրամն և զաշխատու-  
թիւնս չխնայելով՝ հետաքրքիր լինել պար-  
տին որոնել և գտանել զաշակերտացուս  
զքարեբարոյ՝ համեստ՝ ժուժկալ՝ և զու-  
սումնատենչ անձինս , և կրթել զնոսա 'ի  
բազում ժամանակս և նկատել 'ի նոսա ,  
թէ ունին բաւական շնորհս վարդապետ  
լինելոյ , զայնակիսիսն միայն պաշտպանես-  
ցեն առընթեր իւրեանց , միշտ պարա-  
պեցուցանելով զնոսա յուսմաննս դիտու-  
թեան և 'ի վարս սուրբ կրօնաւորութեն՝  
կամ ինքնին և կամ հմուտ վարժապետի  
յանձնելով . ոչ թէ ստանալ փոքրաւորս

առ. 'ի պէտո մարմնաւոր սպասուց իւրոց՝  
 և կամ առ. 'ի փառս, որպէս թէ երեւեսցի  
 Վարդապետն փոքրաւորաւ, այլ ընտրանօք  
 առցեն, զորս և հայրական խնամօք և աղ-  
 գասիրական ոգւով ջանասցեն զցայդ և  
 զցերեկ իբրեւ զտունկս բարիս 'ի վեր ե-  
 րեւեցուցանեւ յայգւոջ սրբոյ Եկեղեց-  
 ւոյ Քնի տեառն մերոյ. որբ բերիցեն 'ի  
 ժամանակին զբարեհամ պտուղս յանզու-  
 գական բերկրանս հոգեւոր մխիթարութե-  
 'ի պանծալի պարծանս աղդիս . և ոչ թէ  
 անհամ և անպիտան պտուղս բուսուցա-  
 նեւ 'ի մէջ պարտիղի սրբյ Եկեղեցւոյ մերոյ 'ի  
 նախատինս աղդիս, և կամ կերպարանօք և  
 եթ վարդապետո և ոչ իրօք և արդեամբք.  
 զի այնպիսիքն լինին ծանր բեռինք աղդիս .  
 և ոչ թէ օգտաբեր տունկը : Իսկ եթէ  
 ընդդէմ հաճութեան կամացն Աստուծոյ  
 և բոլոր լրութեան աղդիս արասցէ զըզ-  
 ուելի պտուղս գործոց անկարգութեանց,  
 ինքեանց և բուսուցանողին՝ անէծս կար-  
 դան ամենայն տեսանողք . եթէ. զայլ ինչ  
 մեղս չունիցի, բաւական է այս յանցան-  
 քըն նորին՝ տանիլ ձգել զանձն այնր վար-  
 դապետի 'ի դժոխս վասն պատճառ լինե-  
 լոյ նորա այնպիսի անպիտան և մոլի ումեք՝  
 բուսուցանելովն յայգւոջ սրբոյ Եկեղեց-

ւոյ : Իսկ ոմանք յԱրքեպիսկոպոսաց և յԱռաջնորդաց զայս զմուաւ ածելով՝ իսպառ դադարեալ են յաղագս եկեղեցականութեան աշակերտս հասուցանել . այլ կալնուն վարձաւոր սպասաւորս 'ի սպաս մարմնաւոր պաշտամանց , բոլորովին անփոյժմացեալ ըստ ամենայնի զվարդապետս յարուցանելոյ ազգիս . այսու շարժմամբ եւս ոչ ազատին 'ի մեղադրութեանց և 'ի յանցանաց , այլ որպէս զգուշանալի է անընտրաբար զիմսասաբեր աշակերտս չհասուցանել . նոյնպէս ամենահարկաւոր սլարտաւորութիւն է զքարեշնորհ հոգեւոր զաւակո՞ այսինքն զվարդապետս հասուցանել :

Կպա ուրեմն յետ այսորիկ ըստ գրութեանս լաւ 'ի միտս ձեր հաստատեալ , եթէ ունիք առ ձեզ զայնալիսի զանալէս փոքրաւորս 'ի բաց թողէք , և փոխանակնոցա զհամեստս և զպիտանացուս ազգիս որոնեալ գտէք , և զսոսյդ զարժանաւորսըն . յառաջացուցէք 'ի պայծառութիւն ազգիս :

Պահանայք նոյնալէս աշխատեսցին հանապաղօր ոչ ցուցանել զպակասութիւն ինչ 'ի հոգեւոր պաշտամունս սրբազն

խորհրդոց Ակեղեցւոյ . այլ ամենայն մասամբ արիութիւնս զգեցեալ՝ ինքեանց յանձնեալ ժողովրդոց վրայ գութ և խռնամբ ունելով՝ հսկել ՚ի վերայնոցա , գայլոց յափշտակել չտալ . միշտ զորպիսութենէ ընտանեաց և զաւակաց իւրաքանչիւրոց իմանալ , բարի խրատս խօսիլ ամենեցուն նոցա , թէ առանին և թէ արտաքրս , և առաւելապէս ՚ի խոստովանութեան :

Ակեղեցականիք՝ սարկաւագունիք՝ դպիրք՝ վարժապետք՝ և այլ ուսումնական անձինք զգաստ մնասցեն միշտ ՚ի խօսս իւրեանց . ՚ի վարս չունիլ ինչ արատս , համեստ շարժմամբ օր քան զօր առաքինասցին . ուսուսցեն ստորադրելոց իւրեանց զբարի ուսմունս , և ջատագով կանգնեսցին սըրբոց Ակեղեցւոյս Հայոց և վարդապետութեանց , և մի ինքնահնար հանձարօք իւրեանց գիտուն երեւիլ ցանկալով , այլ ընդ այլոյ բանիւք պղտորեալ գայթակղեցուսցեն զժողովուրդն :

Եշխանիք հայրական գութ ունիցին ՚ի վերայ հասարակութեան . և խորհեսցին զօդուտնոցին և զշահ . վասն տրոց մինեղեսցեն զչբաւորսն , և մի դանդաղեսցին

աշխատիլ յինչ և իցէ պատահեալ գործս  
նոցա , և անձնամուխ լիցին յամենայն  
դէպս յօգուտ ազգիս վճարել անխորա-  
բար . որպէս զանձնական գործն՝ նոյնպէս  
և զիւրոյ ազգակցի և քաղաքակցի գործն  
հոգալ կատարել ջանասցեն . անգէտռամ-  
կաց պակասութեանց չմնալ և չտաղտկա-  
նալ , այլ ’ի փառս Աստուծոյ տանիլ նե-  
ղութեանց , և ազգասիրաբար յայց ելա-  
նել հանապազօր ’ի պէտս նոցին . յերթալ  
նոցա առ քաղաքապետս զհամազգիս ը-  
բամբասել և չնախատել , միշտ յօգուտ  
ազգիս բանս խօսիլ , միջնորդել և բարե-  
խօսել և ’ի բանտէ և ’ի նեղութեանց վրր-  
կել աղատել . և զինչ և իցէ պակասութիս  
ուրուք ’ի լսելիս այլազգեաց չհասուցա-  
նել , զի մի՛ և նոքա գնացեալ մատնու-  
թիւնս արասցեն . այլ խոհեմութեամբ  
կառավարելով զներելի պակասութիւնս  
ժողովրդոց ծածկել և պահպանել . ’ի հար-  
կաւոր տեղիս ոչ խնայել զաշխատութիւ-  
նըս և զդրամն , այլ առատասիրտ և առա-  
տաձեռն լինել ’ի պայծառութիւնն և ’ի մը-  
խիթարութիւն ազգիս մերոյ :

Հասարակ ժողովուրդք եւս միշտ հը-  
նազանդ եղիցին Առաջնորդի՝ Վարդապե-

տի՞ Քահանայի և համայն կարգաւորաց՝ և  
 բոլոր բարեպաշտ Խշանաց . դատարկա-  
 շը ջիկ և ծոյլ և արբեցօղ և կռուասէր ոք  
 մի երեւեսցի . այլ միշտ աշխատասէր և  
 ժիր ՚ի գործս արհեստի իւրեանց լիցին .  
 և յարբեցութենէ ըստ ամենայնի հեռի  
 կացուսցեն զանձինս իւրեանց . զի ըստ  
 մեծի մասին ծուլութիւնն և արբեցու-  
 թիւնն աղքատացուցանէ զմարդն . եթէ  
 կամիցին չաղքատանալ ժողովուրդք, գլսա-  
 ւորապէս զայս երկու մոլութիւնսն՝ զծու-  
 լութիւնն և զարբեցութիւնն ըստ ամե-  
 նայնի հեռացուսցեն յանձանց իւրեանց .  
 Ժրաժանքն ՚ի գործս և հրաժարեալքն յա-  
 մենայն կերպ մոլութեանց ոչ իսպառ կա-  
 րօտեալ մնան , այլ ըստ բաւականին բար-  
 ւորապէս ապրին ընտանեօք , կեցուցանեն  
 զհոդիս և զմարմինս իւրեանց, և երջանկա-  
 նան աստ և ՚ի հանդերձեալ կեանս : Այլ  
 և ՚ի վաղուց անտի ազգովին խափանեալ  
 չարագոյն չար խոճարադրութենն , որ է  
 դրամով օյին խաղան , չըլլայ որ ժամա-  
 նակ անցնելով մոռանան մեր ազգի Երի-  
 տասարդներն ըստ որում նզովիւք և բա-  
 նադրանօք արգիլուած է : Խնդրեմք Ըռաջ-  
 նորդք և քարոզիչք հոգ տանիլ և միշտ  
 խոճար չխաղալու համար խրատն պատուէ :

ըլն չպահապէցուցանել, և խրատ մտիկ  
 ընօդ ըլքոյ նէ, անխնայ չարաչար պատ-  
 մել խայտառնակել պէտք է, զի մեծազօր  
 Տէրութին ալ ընդհանրասկէս անցեալտա-  
 րի հրաման հանեց խոճար չխաղցուելու  
 համարչապա Առաջնորդք և Քարոզիչք այս  
 բանիս համար ալ շատ հոգ տանիլ և բնաւ-  
 յաւիտեան մէկուն թոյլատրութի ընեն.  
 ամ արթնութեամք լրտեսել իմանալ և  
 առանց ակնառութեան դատեալ սաստել  
 յանդիմանել և վերջացեալ չար սովորու-  
 թիւնո կրկին չարծարծելոյն խոհեմութք  
 աշխատիլ:


Եւ ամենայն ոք որբան յաշխարհիս  
 յայսմիկ կենդանի են, զգուշացին յօ-  
 տարաձայն քարոզութեանց, և հետեւես-  
 ցին մերս սուրբ Եկեղեցւոյ ուղղափառ  
 և բարեկրօն Վարդապետաց, որք գիտեն  
 ուղիղ համառօտել մեզ զբանն ճշմար-  
 տութե. քանզի բարին չարէն զատելը  
 մեծ իմաստութի է. և եթէ դու այս կա-  
 րոզութիը չունիս՝ քու ազգիդ ուղղափառ  
 կարգաւորներուն և ողջամիտ գիտուննե-  
 րուն բանիցը ունկնդիր եղիր. մի վախնար  
 ՚ի Քրիստոսէ անտի հաստատեալ և ՚ի սըր-  
 բազան Առաքելոց քարոզեալ և յածար-  
 եալ Հայրապետաց անսասան պահեալ

անարատ սուրբ Աշեղեցիս Հայոց՝ զքեզ  
ժառանգ դժոխոց ընելու վարդապետու-  
թիւն չուսուցանէր, և կամ ըստ քմաց  
իւրոց ինքնահնար բան չի քարոզէր, այլ  
միշտ սուրբ գրովք կը հաստատէ . քանզի  
ուսեալ է. 'ի սրբազան Առաքելոյն՝ թէ «  
Ամենայն գիրք աստուածաշունչք և օդ-  
տակարք 'ի վարդապետութիւն, և յան-  
դիմանութիւն, և յուղղութիւն, և 'ի խրատ  
արդարութեն . զի կատարեալ իցէ մարդն  
այ յամ գործս բարութեն հաստատեալ» .  
( բ . պիմ . գ . 16 ) : Եւ թէ « Որ ինչ գրե-  
ցաւն՝ 'ի մեր վարդապետութիւն գրե-  
ցաւ . զի համբերութեամբ և միսիթարու-  
թեամբ գրոց զյոյսն ընկալցուք » . ( հոռմ .  
ԺԷ . 4 . ) :

Ապա սիրովն Յիսուսի Քրիստոսի կը  
յորդորեմ լուսաւորչերամ ազգս Հայոց,  
որ մոլար աղանդապետներէն հեռի փախ-  
չիք որպէս 'ի թունաւոր կարճաց . անոնց  
ամէն մէկը իրենց մտաց կերպ կերպ չար  
խորհուրդները կատարելու համար, սուրբ  
գիրքերէն դուրս ելլելով՝ ինքնահնար վար-  
դապետութիւններ կը քարոզեն . և իրենց  
նման թուլամորթ անձինք հետեւող կը  
գտնան նոյն հոգեկորուստ վարդապետու-  
թեանցը, քանզի լայն և ընդարձակ ճա-

նապարհի քարոզիչ են իրենք . որոյ վախ-  
ճանն է յաւիտենական կորուստ ըստ բա-  
նին տէրունի : Արդ՝ յաստուծոյ չի վախնա-  
լով և 'ի մարդկանէ չամաչելով կ'ըսեն .  
խոստվանութիւնը ի՞նչ է , պահքն ի՞նչ  
է , որբոց մասունքը ի՞նչ զօրութիւն ու-  
նի , պատկերաց յարգութիւն տալը կռա-  
սվաշառւթիւն է , սուրբերը յարգել և ա-  
նոնք բարեխօս բռնել պէտքը չէ՝ ինչու որ  
անոնք ալ մեղի պէս մարդ են . մինչեւ ան-  
գամ ամենասուրբ Կոտուածամօր և յան-  
դրդնեալ են զայն խօսքն խօսիլ , ( որ մեզ  
քաւ լիցի ասել զայսոսիկ ) . և հարկ կը  
դնեն միայն աւետարան կարդալ հետեւո-  
ղաց իւրեանց . և նոր կոտակարանսն տպել  
կուտան . այն որ յայտնի ընդդէմ է մոլար  
վարդապետութեանցն իւրեանց , զայն բան  
կամ խսպառ կը հանեն 'ի միջոյ աստուա-  
ծաշունչ սուրբ գրոց , և կամ թէ 'ի լու-  
սանցն գրեն՝ թէ չեք 'ի բնադիրն . և այլ  
այնպիսի խաքէական բանիւք և շարժմամբ  
սպառազինին ընդդէմ Կոպքելական կա-  
թուղիկէ սրբոյ Եկեղեցւոյ . և ոմանք 'ի  
պարզամտաց մերոց չեն գիտեր՝ թէ այս  
բանին սուրբ Կետարանին ընդդէմ է՝  
և քրիստոնէութեան հակառակ . վասն ո-  
րոյ և մեք մեր ազգին մի առմի առաջի

28/42-62



գնելով մեր ունեցած սուրբ հաւատոյ ճշմարտութիւնը, և կը հաստատեմք նր Աւետարանի վկայութեամբն, որ գիտնան մեր սուրբ Եշէղեցւոյն ուղղութիւնը, և չի հետեւին նոյն մոլորամիտներուն . ըստ որումտերն մեր Յիսուս Քրիստոս ալ երանէ զՃշմարիտ քրիստոնեայս քանիւ նր Աւետարանին յասելն . “ Ոչ լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ ’ի վը աշտանակի . և լոյս տայ ամենեցուն՝ որ ’ի տանն իցեն ” ( Տպ. Ե. 15 ). ուստի միջոցաւ այս տետրակիս մեր նր Եշէղեցւոյ ճշմարտութիւր քարողեմք իբրև ճրագ ’ի մէջ տան Հայոց . որ ունիցի ակաչս լսելոյ՝ լուիցէ :

Խոստովանութեան ինչ ըլլալը խմացիր . խոստովանութիւնը հարկաւոր գեղէ ներգործական մեղաց, որպէս մկրտութիւնն սկզբնական մեղաց . և ինչպէս մկրտութիւնն ոյնպէս և խոստովանութիւնն Քրիստոս ինքն սահմանեց, երբ որ Առաքելոց հրաման տուաւ ասելով, “ Օ որ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս . և զօր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս ” ( Տպ. Ժ. 18 ) : Եւ յետ յարութեանն ասաց . “ Առէք Հոգի սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ մցի

նոցա . Եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լի-  
ցի ս (յովհ . ի . 22) : Աւստի առաքեալնե-  
րըն ալ կը խրատէին զհաւատացեալսն խոս-  
տավանիլ . ինչպէս սուրբ Յավիաննէս աւե-  
տարանիչ կ'ըսէ . “ Եթէ ասիցեմք՝ եթէ  
մեղս ինչ մեք ոչ ունիմք , զանձինս խա-  
բեմք , և Ճշմարտութիւն ՚ի մեղ ոչ գոյ .  
ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր ,  
հաւատարիմ է նա և արդար առ ՚ի թո-  
զուլ զմեղս մեր , և սրբել զմեղ յամենայն  
անիրաւութենէ ” ( տ . յովհ . տ . 8 ) : Եւ  
աւետնեղբայր առաքեալն Յակոբոս ա-  
սէ , “ Խոստովան եղերուք միմեանց զմե-  
ղը ձեր ” (յակ . ե . 16) : Այս միտանց  
բառին վրայ կը սխալին ոմանք և կ'ըսէն .  
խոստովանիլ պէտք է՝ բայց հարկ չէ բա-  
հանայի միայն խոստովանիլ . վասն զի Յա-  
կոբոս առաքեալ կ'ըսէ , խոստովան եղերուք  
միմեանց : Ինչու համար բանին սկիզբէն  
չեն կարդար . չէ թէ ՚ի սկիզբն կ'ըսէ Յա-  
կոբոս “ Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ՝ կո-  
չեսցէ զերիցունս Եկեղեցւոյ ” (յակ . ե .  
14) . և ուր թողունք՝ որ ՚Քա տէրն մեր այս  
խորհուրդն կատարելու միայն՝ Կոաքելո-  
ցը հրաման տուաւ ասելով , “ Կոէք ՚ո-  
գի սուրբ , եթէ ումեք թողուցուք զմե-  
ղս՝ թողեալ լիցի նոցա ” . և այս իշխա-

նութիւնը օրինաւոր ձեռնադրութեամբ  
իջանէ յամենայն եպիսկոպոսունս և քա-  
հանայս, ուստի անոնք միայն կարեն թո-  
ղուլ զմեղս իրենց կարգին զօրութեամբն  
և Աստուծոյ հրամանաւն . ահա խոստո-  
վանութիւնը այս է : Ապա ծանիր պար-  
զամիտ՝ եթէ խոստովանութիւնը փուժ  
հանողներուն միոքը ինչ է . յայտ է թէ  
անխիղճ մեղանչել է . վասն զի խոստովա-  
նութիւն սանձ մի է քրիստոնէին . եթէ խոս-  
տովանութիւն չըլլայ՝ համարձակ ուղած մեղ-  
քը կը գործէ մարդ . բայց դու՝ որ ճշմա-  
րիտ քրիստոնէայ ես, գիտցիր որ խոստովա-  
նութիւն հարկաւոր գեղ է ներգործական  
մեղաց . “Ասա դու նախ զանօրէնութիւ-  
ք” , զի արդարասցիս ո (Եսայ . խոր . 26) :

Պահքն ինչ է ըսողին ալ այսպէս պա-  
տասխանէ . պահոց ինչ ըլլալը Աստուա-  
ծաշունչը և սուրբ Աւետարանը յայտնեն  
մեզ . Ո՞վսէս մարդարէն պահելով արժա-  
նացաւ աստուածաւութե . Եղիա յեր-  
կինս վերացաւ . երեք Աննկունքն անկիղե-  
լի մնացին ’ի մէջ հնոցին . Դանիէլ անվը-  
նաս մնաց ’ի գրի ’ի ժանեաց առիւծուց .  
Նինուէացիք ապրեցան ’ի յանկարծահառ  
պատուհառէն . Քրիստոս տէրն մեր ինք-

Նին օրինակ տուաւ մեղ պահելոյ . “Պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ” ( Տագ . դ . 2 ) . և զօրութիւն պահոցըն յայտ արար ասելով . “ Այս ազգ ոչիւիք ելանէ՝ եթէ ոչ պահօք և ալօթիւք ո ” ( Տարի . թ . 28 ) : Ահա այսքան մեծամեծ օգուտներ ունի պահքը . բայց վուճ հանօղ որկրամոլները ի՞նչ օգուտ ցոյց կարեն աալ , ոչ այլ ինչ՝ այլ ծառայութիւն որկորոյ . “ Այլ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ ոչ կացուցանէ ” ( Թ . իրն . ը . 8 ) :

Արբոց մասանց զօրութիւնը իմանալու համար կարդայ Աստուածաշունչը , և անախ սորվե՛ սրբոց մասանց զօրութիւնը . Եղիսէ մարգարէին ոսկերքը մեռեալ յարուցին ( Թ . Բագ . Ժկ . 21 ) : Պետքոս առաքելոյ ստուերը հիւանդ կը բըժըշկէր ( Գործ . Ե . 16 ) : Պօղոս առաքելոյ քրոինքին թաշկինակը ախտ կը մերժեր՝ և դեւ կը հալածէր ( Գործ . Ժթ . 12 ) : Եթէ սրբոց մասունքը կամ ստուերը և թաշկինակը այսչափ զօրութիւն ունի , ապա ո՞րչափ մեծ զօրութիւն ունի սուրբ կենաց փայտը՝ յորում Քրիստոս բեւեռեցաւ , և աստուածացեալ արեամբն ներկեցաւ . եթէ չէր ՚ի նմա բեւեռեալն Աստ-

ուած՝ և ոչ աստուածային արիւն, ոչ վը-  
կէր զմեղ՝ ՚ի դատապարտութենէ, և ոչ  
գին լինէր ազատութեան ազգի մարդկան.  
ուրեմն որքան տէրունական նշան սուրբ  
Խաչը կը տեսնամք, անոր վրայ Քրիստոս  
բեւեռեալ վասն փրկութեան մեր առաջի  
աչաց մերոց նկարագրեալ բերեմք, և պաշ-  
տեմք ոչ զնիւթն Խաչի և պատկերի, այլ  
զաննիւթն Աստուած՝ որ ՚ի նմա է զօրու-  
թեամք, զոր ուղղափառ հաւատոյ լու-  
սով լուսաւորեալ ակն տեսանէ՝ ՚ի խաչին, և  
ասէ՝ ՚ի սմա բանիդ հօր երկրպագեսցուք:

Պատկերաց յարգութիւնը արժան է  
մեղ ճանաչել. քանզի եթէ մեք ճշմարիա  
քրիստոնեայքս կուապաշտներուն պէս  
պատկերաց աստուած ասէինք՝ անտեղի  
էր. բայց յետին ռամիկն մեր անդամ  
պատկերին Աստուած չասէր. այլ պատ-  
կերին նայելով՝ անոր տէրը միոքերնին կը  
բերեն, և երկրպագութիւն Աստուածոյ կը  
մատուցանեն. ինդիրքնին և հայցուածք-  
նին կատարելու համար սուրբերը և  
հրեշտակները յօդնականութիւն կը կան-  
չեն, և կ'աղաւեն՝ ըստ որում սուրբերը  
համարձակութիւն ունին առաջի Աստու-  
ծոյ, իրենց համար մաղթել և բարեխօ-

օելառ Աստուածի, որ կատարի խնդիրքնին։  
 Յօղենիին առակն որ Աւետարանին մէջ  
 միորդ բե՛ր . “ Այս երեք ամ է գամ խնդ-  
 րել զպտուղ՝ և ոչ գտանեմ . արդ՝ կորեա-  
 զդա ընդէ՞ր և զերկիրդ խափանէ ” . ապա  
 առ այգւոյ տէրն Քրիստոս աղաչեցին հը-  
 րեշտակը և սուրբ պահապանը այգւոյն  
 և թղենւոյն . “ Տէր թող զդայայս ամ և ս-  
 ուրջ զդովաւ բրեցից և արկից զաղք ,  
 թէրեւս արասցէ պտուղ ( ապաշխարռւ-  
 թեան ), ապա թէ ոչ յամէ եւս հատցես  
 զդա ” ( Ղ-ի . Ժկ . 9 ) : Տե՛ս աստանօք  
 ուղղափառ քրիստոնեայ՝ զի ընդհանուք  
 փրկութիւն ազգի մարդկան Քրիստո-  
 սիւ եղեւ . և ըստ առաքելոյն՝ մի է միջ-  
 նորդն մեր և բարեխօս ( առ . պիմ . բ .  
 5 ) . և յիրաւի Քրիստոսի նման ուրիշ-  
 մէկը չունիմք , որ Աստուծոյ և մարդկան  
 մէջ միջնորդ և բարեխօս ըլլայ , և յաւի-  
 տենական դժոխոց ժառանդութենէն ա-  
 զատէ . բայց վասն կամաւոր և ներգործա-  
 կան մեղաց մերոց առ ՚ի չդատապարտել  
 զմեղ կամի Քքրիստոս տէրն մեր՝ զի սուրբք  
 բարեխօսեսցեն առ ինքն , և դառն դեղն  
 ապաշխարռւթեան իբրեւ աղք արկցեն  
 շուրջ զանպտուղ տնկովն . իսկ եթէ ոչ  
 զգացեալ և խոստովանեալ՝ ոչ զպտուղար-

ժանի ապաշխարութեան ցուցանիցէ ոք ,  
 յայնժամ տէր այգւոյ սրբոյ Եկեղեցւոյ  
 Քրիստոս հատանէ զնա , և ՚ի հուր դժու-  
 խոց այրէ , և սուրբք յայնժամ ոչ բարե-  
 խօսեն : Այս պատկեր դնել ՚ի մէջ Եկե-  
 ղեցւոյ կռապաշտական մտօք չէ , այլ պատ-  
 կերին նայելով՝ տէրն միտք բերելն բարե-  
 պաշտութիւն է . օրինակաւ մը յայտնեմ  
 ըսածս . սուրբ Աւետարանին մէջ կը կար-  
 դամք՝ թէ Քրիստոս խաչեցաւ՝ թաղե-  
 ցաւ՝ և յարեաւ , և այլն . նոյն բանն կը  
 տեսնամք խաչելութեան՝ թաղման և յա-  
 րութեան պատկերներուն վրայ . և զեր-  
 մեռանդութեամք Քրիստոսի երկրապա-  
 գութիւն կ'ընեմք : Սուրբ Ատեփաննոսի  
 քարկոծումը կը կարդամք գործոց մէջ ,  
 նոյն բանը կը տեսնամք անոր պատկերին  
 վրայ . սուրբ Ատեփաննոսը բարեխօս կը  
 բռնեմք առ Քրիստոս աստուածն մեր ,  
 վասն զի այն՝ որ զինքը քակոծողաց հա-  
 մար աղօթք ըրաւ , ՚ի հարկէ մէք որ զին-  
 քը բարեխօս բռնեմք , առաւել եւս մե-  
 ջի համար կ'ընէ . ապա յայտնի է՝ որ նը  
 գիրքերն և պատկերներն մի և նոյն պաշ-  
 տօն ունին՝ և կը շարժեն զմեզ զերմեռան-  
 դըն լինիլ առ Աստուած . սուրբ գիրքերն  
 ականջի ճանապարհաւ՝ և պատկերներն աշ-

քի ճանապարհաւ . բայց որպէս օձը ինչ  
 որ կ'ուտէ թօյն կը կազմէ անկեց , այսպէս  
 և չար մարդիկներն . «Օ լուսաւորսերկնաւ-  
 որս զարբանեակա աշխարհի Աստուած  
 համարեցան » ( իմաստ . ժկ . 2 ) . ուր մեծ  
 նահապետն Աբրահամ ժրաջան մեղուի  
 նման միշտ ժողովեց անոնցմէ , այսինքն ա-  
 նոնք տեսնալով ճանաչեց զՃշմարիտն Աստ-  
 ուած՝ և հաւատաց 'ի նա և արդարացաւ .  
 սակայն Աբրահամու յորդոցմէ իրեն պէս  
 անյողվյողդ հաստատ հաւատք չունեցող-  
 ներ երեւցան յետ այնորիկ , երբ տեսան  
 ձուլածու որթն յանապատի՝ և առացին .  
 « Իհա՛ Աստուածք քո խորայէլ , որք հանին  
 զքեզ յերկրէն Եգիպտացւոց » ( Ելշ . լք .  
 4 ) : Ա ն այսորիկ արգիլեց Ա՛ծ անսց տաս-  
 նաբանեայ օրինաց մէջ , ոչ միայն դրօշեալ  
 չառնել , այլև « Ո՞ի զնմանութիւն ամե-  
 նայնի » ( ը . օրին . Է . 6 ) . այս է պատկեր .  
 Խոկ մեք աւետեաց որդիքս Աբրահա-  
 մու , ինչպէս 'ի սուրբ գիրքէն՝ նոյնպէս 'ի  
 սուրբ պատկերաց կը խրատիմք զՃշմարիտ  
 արարիչն մեր և զփրկիչն պաշտել՝ և նորին  
 սուրբերը յարգել . բայց անամօթաբար  
 կ'ըսեն՝ թէ սուրբերը յարգել և բարե-  
 խօս բռնել պէտք է մի , ոչ ապաքէն ա-  
 նոնք ալ մեղի պէս մարդ է ին :

Ասէ՛ քրիստոնեայ՝ յիրաւի մեզ նման  
 բնութեամբ մարդ էին, բայց ամենայն  
 մասամբ առաքինացեալ՝ և իբրեւ հուր  
 բորբոքեալ 'ի վեր յերկինս ցոլանային գը-  
 տանել զկեդրոն և զկամար իւրեանց, որ  
 է Աստուած : Ի՞նչպէս սուրբ կարապետ  
 մեզի պէս մարդ կ'ըլլայ՝ որուն համար Քր-  
 իստոս կը վկայէ . « Չէ յարուցեալ 'ի ծը-  
 նունդս կանանց մեծ քանզիշաննէս մը-  
 կըստիչ » ( Տապ . Ժա . 11 ) : Սուրբ Առա-  
 քեալք ի՞նչպէս մեզի պէս մարդ կ'ըլլան,  
 որոց կ'ըսէ Քրիստոս . « Աստվիք և գուք  
 յերկոտասան աթոռս դատել զերկոտա-  
 սան աղդս իսրայէլի » ( Տապ . Ժթ . 26 ) :  
 Գուք բարեկամ իմ էք . ոչ կոչեմ զձեզ  
 ծառայս, զի ծառայն ոչ գիտէ՝ զինչ գոր-  
 ծէ տէրն . և յետ յարութեանն եղբայրս  
 եւս անուանեաց զնոսա , « Երթայք ասա-  
 ցէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն 'ի Պալիլ-  
 եա, և անդ տեսցեն զիս » : Եւ սուրբն  
 Պօղոս 'ի Քրիստոնէ կոչեցեալ յառաքե-  
 լութիւն, ընտիր անօթն շնորհաց՝ որ ցան-  
 կայր ելանել 'ի մարմնոյ աստի, և լինել  
 ընդ Քրիստոսի, ասէ զանձնէ իւրմէ .  
 « Չեմ իսկ արժանի՝ թէ կոչեցայց առաք-  
 եալ » ( ա . կորն . ԺԵ . 9 ) : Ապա ով կընայ  
 համարձակիլ և ասել, թէ սուրբ Առաք

եալներն և անոնց յաջորդ սուրբ այրապետներն ալ մեզ նման մարդ էին . յիրաւի մարդ էին՝ բայց իբրեւ հրեշտակ կենցաղավար էին . քանզի մեռուցին զմարմնական կիրս ’ի մարմնաւորութե անդ . “ Ինձ աշխարհ ’ի խաչ ելեալէ , և ես աշխարհի սաէ սուրբն Պօղոս : Ընթերցիր զվարս սրբոց և զմերս | ուսաւորչին , և հոգւոյ աչօք տես զանտանելի չարչարանս նոցա . կարես արդեօք շարժել զլեզու քո և բարբառիլ , թէ մեզ նման մարդ էին . սադայէլի է այն ախտ , ելից ’ի վերյերկինս . . . եղից զաթոռն իմ յամազ , և եղէց նման բարձրելոյն , և այլն . խօսքով չաւարտիր այն՝ այլ գործով . սադայէլն այնպէս կարծէր զանձնէ , բայց էջ ’ի դժոխս . ուրեմըն մարմնական ցանկութիւնը չի զսպող վասն միոյ կատարինէ մայրապետի ուրացողն զկարգ իւր\*, զիամրդ կարէ հաւասարիլ

\* Այս ուրացողը է Լուտէր . որ Օպոստինոսեան կարգէն էր , սակայն եղեւ ամսան շարին սասանայի . և գնաց կատարինէ անսւն մայրապետ մը առաւ . և ոկտոս ընդդէմ մտաց սուրբ Աւետարանի և սրբազն Առաքելոց մտացածին վարդապետութիւն քարոզել՝ լայն և ընդարձակ ճանապարհ ցուցունելով . թուրամնրթ անձինք և տգէտք ’ի սուրբ գրաց հետեւեցան անոր , ինքն եղեւ աղանդապետ . և հետեւովք նորին աղանդաւոր , որ զուրկ են ’ի շնորհաց քրիստոնէական սրբոց Եկեղեցւոյ :

որբոց . և որպէս կարէ ասելըստ Պօղոսի ,  
“ Ամանօղ ինձ եղերուք՝ որպէս և ես Քրիս-  
տոսի ” . նա խոնարհութեամբ կուսութք  
բազում վշտօք և չարչարանօք նմանեցաւ  
տեառն՝ որ սուրբն է որբոց . և ընդ հա-  
կառակն քարոզողաց հետեւողքն ՚ի հարկէ  
նմանին աղանդավետի իւրեանց :

Իսկ Ճշմարիտ հաւատացեալքս ուսա-  
նիմք ՚ի որբոց Կռաքելոց՝ և ՚ի նոցին յա-  
ջորդաց ՚ի որբոց Հայրապետաց զխոնար-  
հութի և զհեղութի . ըստ այնմ թէ “ Ու-  
սարուք յինէն՝ զի հեղ եմ և խոնարհ որբ-  
ուիւ և գոյջիք հանդիստ անձանց ձերոց ”  
( Տպ. Ժ. 29 ) : Վ ասն որոյ զնքսն ԿԾ գեր  
՚ի վերոյ քան զմեղ համարեալ յարգեմք և  
մեծարեմք . մանաւանդ ամէնօրհնեալ որ  
Կոտուածածինն , որք կենդանի են առ  
Կոտուած . ըստ այնմ թէ “ Հոգիք արդա-  
րոց ՚ի ձեռին Կոտուծոյ են՝ և ոչ մերձես-  
ցի ՚ի նոսա մահ ” . և բարեխօսեն վասն մեր  
հաւատացելոց յամենայն ժամ՝ թէ ՚ի  
կենդանութեան իւրեանց և թէ ՚ի մահ-  
ուան : Քաջայայտ է ՚ի սուրբ Կւետարա-  
նէն . Յիսուս ՚ի կանա գոլիլեացւոց ՚ի  
հարսանիսն բարեխօսութեամբ մօրն իւ-  
րոյ զջուրն ՚ի գինի փոխարկեաց . ( յով . թ .  
3 ) : Կոտանօր եւս յանդգնին ասել ու

մանք, թէ Յիսուս ՚ի կանա գալիլեացւոց  
հարսանիքին մէջ իւր մայրը յանդիմանեց.  
քաւ լիցի կործել զայդ զնմանէ, որ զօրէ-  
նըս եղ՝ «Պատուեա զհայր քո և զմայր »:  
Յայտ է յառակ թղենւոյն. ուր աղաչէ  
այգեգործն զտէր չկարել զթղենին. տէր  
ասէ՝ թող զդա յայս ամ եւս, որպէս ՚ի  
վեր անդր մեկնեցաք: Եւ թէ եթէ ար-  
իւն Աբէլի բողոքէ առ Աստուած վասն  
սպանողին (Ճնշ. դ. 10). ապա և բա-  
րեխօսէ վասն տօնսողին: Աստուած ինքնին  
ասէ բանիւ Եսայեայ մարգարէին, «Ա Ե-  
րակացու եղէց քաղաքիդ սյդմիկ ապրե-  
ցուցանել զդա վասն իմ և վասն Դաւթի  
ծառայի իմոյ » (Եսայ. Լէ. 35): Եւ ՚ի  
գիրս Յոթայ ասէ Աստուած ցմեղուցեալ  
բարեկամս նորա. «Յոթ ծառայ իմ ա-  
րասցէ աղօթս վասն ձեր, զի եթէ ոչ նր-  
մա ակն առեալ էր . . . կորուսեալ էր իմ  
արդեօք զձեղ» (յոթ. Խոթ. 8): Եւս Յը-  
րիստոս սուրբ Աւետարանին մէջ կ'ըսէ.  
«Ո՞ր համարիք՝ եթէ ես չարախօս ինչ ի-  
ցեմ զձենջ առ հօր գոյ՝ որ չարախօս կայ  
զձենջ Անվակէս, յոր գուքն յուսացեալ  
էք, զի եթէ հաւատայիք դուք Անվակէսի,  
հաւատայիք արդեօք և ինձ, զի նա վասն  
իմ իսկ գրեաց » (յոթ. Ե. 45): Ապա

ըստ վկայութեան տեառն եթէ Անվակս  
 չարախօսէ վասն հրէից անհաւատից ,  
 հարկաւ և բարեխօսէ վասն հաւատացէ-  
 լոց , ըստ որում 'ի կենդանութե իւրում  
 եւս նոյն Անվակսն բարեխօսեաց վն ժողո-  
 վրդեանն այսպէս . « Եթէ թողուս նց զմե-  
 զոս իւրեանց , թող . ապա թէ ոչ ջնջեան և  
 զիս 'ի դպրուէդ , յոր գրեցեր » (Ելք . լք .  
 31) : 'Եաւ մեռեալ էին Աբրահամ՝ Յա-  
 կոբ՝ և Խսահակ , երբ երեք Այանկունքն ՚ի  
 գերութե բարիլացւոց անկան ՚ի հնոց ,  
 զնն բարեխօս և միջնորդ կացուցանէին յա-  
 զօթս իւրեանց՝ որ առ Ած . թէպէտ խար-  
 դախ ոմանք պակասեցուցեալ են ՚ի տըպ-  
 եալ աստուածաշունչէ իւրեանց զայս բան  
 բոլորովին , վասն Աբրահամու սիրելոյ  
 քո և այլն : Վասն որոյ չէ արժան առնուլ  
 զայնպիսի տպեալ գիրսն , թէ և սուրբ  
 գիրք իցեն , զի բազում են ՚ի նոսա այս-  
 պիսի խարդախութիւնք . է որ՝ պակասե-  
 ցուցեալ , և է որ՝ պարզամտաց պղորու-  
 թիւն տալոյ աղադաւ բանս խառնեալ են :  
 Արդ՝ այժմ՝ այսպէս հարցում մը կ'ընեմ .  
 ես աշխարհիս վրայ զսուրբոն յարդեմ՝ մե-  
 ծարեմ և բարեխօս կը բռնեմ առ Ած ,  
 մանաւանդ ամէնօրհնեալ միշտ սուրբ կոյսն  
 Աստուածածին . ընդհակառակն կ'ընեն

ոմանք . ի՞նչ կը կարծես . Պրիստոս դա-  
տաստանին օրը անոր պիտի ըսէ՞ արդեօք ,  
թէ եկո՛ք զի պսակ տամ , վասն զի դու  
աշխարհի վրայ իմ սուրբերս կամ մայրա-  
շի յարդեցիր , չի մեծարեցիր՝ և բարեխօս  
չի բռնեցիր . ինձի ալ պիտի բարկանայ  
արդեօք , թէ դու իմ մայրս իմ սուրբերս  
ինչու յարդեցիր մեծարեցիր և բարեխօս  
բռնեցիր . այս դատաստանը իմաստուն և  
ողջամիտ ընթերցողաց թողում դատել . և  
զիրաւացին քարոզելով զմերայինսն ՚ի վե-  
րայ ուղղութեանցն իւրեանց հաստա-  
տուն պահել աղաջեմ , և ջանասիրեսցեն  
հանապազօր անխոնջ երկասիրութեամբ :

Սուրբ պատարագի դէմ յանդգնողաց  
այսպէս պատասխան տուր : Այս ահաւոր  
խորհուրդը սրբոյ Պատարագի Պրիստոս  
ինքը սահմանեց ՚ի վերջին ընթրիսն ասե-  
լով սահմանաբար . “ Առէք կերայք այս է  
մարմին իմ . արբէք ՚ի դմանէ այս է ար-  
իւն իմ նորոյ ուխտի ” ( Տափլ . ինք . 26 ) :  
Ապա առաքելոց և ՚ի ձեռն նոցա ամենայն  
քահանայից իշխանութիւն ետ զնոյն առ-  
նել . “ Օ այս արասջիք ( ասէ ) առ իմոյ յի-  
շատակի ” ( Հռ-ի . ինք . 26 ) : Այս յիշտակ  
բառիս վրայ մոլար քարոզիչներն բանա

անհաւատութեանխօսելով՝ կ'ուղեն պըզ  
 տորել զմիտոս և գայթակղեցուցանել բգ  
 ճշմարիտ հաւատացեալ քրիտոնեայս .  
 բայց ինչո՞ւ « Օ զայս արասջիքն ո չեն տես-  
 նար . զայս արասջիք , ասէ , զոր ես արա-  
 բի . և զի՞նչ արար Քրիտոս , յայտ է թէ՝  
 զհացն և զգինին մարմին և արիւն իւր ա-  
 ռելով ետ . և ապա Առաքելոցն ասաց՝  
 զայս արարէք առ իմոյ յիշատակի . այսին-  
 քըն զպատարագելն Քրիտոս սրբոյ Եշէ-  
 ղեցւոյ իւրում յիշատակ թողուց . ապա  
 յիշատակի բառիւ չէ թէ իրաւապէս գո-  
 յափիսութիւնն եղծանի , այլ մանաւանդ  
 եւս հաստատի . Եթէ ասիցէ ոք Քրիտ-  
 ոսո ՚ի յերկինս՝ որպէս ՚ի վերայ ամենայն  
 սեղանոյ իջանէ և պատարագի . մի զար-  
 մանար՝ ըստ Գաբրիէլի մեծի հրեշտակա-  
 պետին՝ ոչ տկարասցի առ յՀատուծոյ ա-  
 մենայն բան . որպէս ոչ մեկնելով ՚ի հօրէ  
 բանն մարմին եղեւ՝ և բնակեցաւ ՚ի մեզ-  
 նոյն աստուածային բանն էր յոշնչէ գոյա-  
 ցուցոնօզն զամենայն արարածս . ասաց  
 և եղեն՝ հրամայեաց և հաստառեցան . ա-  
 հաւասիկ նոյն բանն Ած է՝ որ ասաց ՚ի վե-  
 րայ հացի և գինուոյ լինել մարմին և ար-  
 իւն իւր , և զնոյն բան եղ ՚ի բերանս Ա-  
 ռաքելոց և յաջորդաց նոցա , որ մինչեւ

ցայսօր ՚ի ձեռն քահանայի կատարի նոյն  
խորհուրդն գոյափոխելով իսկապէս մար-  
մին և արիւն տեառն . որպէս հաւատամբ  
թէ բանիւ Աստուծոյ գոյացան ամենոյն  
արարածք և էութիւնոց , միշտ ՚ի ներ-  
գործութեան են յաւիտեան , և ոչ սպա-  
ռին տեսակք նոցա յաշխարհէ մինչեւ ցը-  
վերջ աշխարհի . նոյնպէս հաւատամբ՝ թէ  
յամենայն տեղիս ուր և պատարագեցի  
Քա , անդ է ՚Քրիստոս ներկայ զօրութիւն  
բանին իւրոյ , զի ուր է Ճառագայթն ա-  
րեգական՝ անդ է և արեգակն էապէս :

Եւ ուր թողունք այն հակառակողնեւ-  
րը մերս սրբոյ Երկեղեցւոյ , որք մտեալ ՚ի  
մեջ թղթոցն սրբոյն Պօղոսի՝ գտեալ են ըզ  
հետեւեալ բանս . “ Իսկ ուր թողութիւն  
է , ոչ եւս պիտոյ է վասն մեղաց Պատա-  
րագ ” (ԵԲՀ . Ժ . 18) . “ Օ ի կամակաք  
մտօր եթէ յանցանիցեմք յետ ընդունե-  
լութեան գիտութեան ճշմարտութեանն ,  
այնուհետեւ ոչ եւս պիտոյ է վ՛ մեղաց  
Պատարագ ” (ԵԲՀ . Ժ . 26) : Օ արմացման  
արժանի է տգիտական գիւտ նոցա . ըն-  
գէր չզանգիտեն՝ զգիտումն սրբազան Ա-  
ռաքելոց թիւրել և ըստ ամենայնի օտա-  
րացուցանել յիմաստիցն անդանօր գրե-  
լոց . գիտասցեն՝ զի թուղթն այն գրէ Ա-

ռաբեալն առ երրայեցիս, որք ունեին ղօ-  
րէնս՝ զոհիւք քաւել զներգործական մեղս  
իւրեանց, արեամբ ցլուց և նոխաղաց և  
երնջոց ղենմամբ՝ յառաջին խորանն յամե-  
նայն ժամ մտանէին քահանայք պատշտա-  
մունս կատարել, բայց յերկրորդումն միւ-  
անգամ՝ ի տարւոջն քահանայապետն, և  
ղայն ոչ առանց արեան՝ զոր մատուցանէր  
վասն իւր՝ և վասն ժողովրդեանն անգի-  
տութեան (ԵԲ. 17. 6): ‘Վիտումն բա-  
նի սուրբ Առաքելոյն այս է. ով հրեայք՝  
այն ղենմունքներն ձեր ոկղընական մեղքը  
չէր սրբեր, միայն ներգործականն կը սր-  
բէր: Քան եկեալ քահանայապետ հանդեր-  
ձելոցն բարեայ մեծաւն և կատարելովն,  
և անձեռագործ խորանաւն, այսինքն է՝  
որ ոչ յայսց արարածոց և ոչ արեամբ նո-  
խաղաց և զուտրակաց, այլ իւրով արեամ-  
բըն եմուտ միանգամ՝ ի սրբութիւնս յա-  
ւիտենականս գտեալ զփրկութիւն. զի ե-  
թէ արիւն ցլուցն և նոխաղացն և մոխիր  
երնջոցն ցանեալ՝ զալզեալսն սրբէր առ ’ի  
մարմնոյ սրբութենէ, ո՞րչափ եւս առա-  
ւել արիւնն Պրիստոսի, որ ’ի ձեռն հոգ-  
ւոյն յաւիտենականի մատոյց զանձն ա-  
նարատ Պատարագ Աստուծոյ, սրբեսցէ  
զիսիղձ մտաց ձերոց ’ի մեռելոտի գործոց

անտի՝ պաշտել զԱստուած կենդանի :

Տե՛ս աստանօր զամբողջ բանն սրբոյն  
Պօղոսի , և մի խաքիր ՚ի վերայ խորաման  
կութեան աղանդաւորաց . “ Ոչ եւս պի-  
տոյ է վասն մեղաց Պատարագ ” ասելով  
պղտորել կամին զմիտո քո . որպէս թէ  
Քրիստոսաւանդ սուրբ Պատարագն պէտք  
չէ . Առաքելոյն գիտումն բաղդատութիւ-  
նըս առնէ հին օրինաց Պատարագի զեն-  
մունքն ընդ Քրիստոսի մահուանն . հա-  
ւատայիք կ'ըսէ , թէ այն անասնոց զեն-  
մամբն թողութիւն կ'առնէիք , հաւատա-  
ցէք որ ընդհանուր փրկութիւնն ազգի  
մարդկան Քրիստոսի խաչին վրայ Պատա-  
րագելով և արիւն թափելով եղեւ . գիտ-  
ցէք որ յետ այսորիկ անանկ անասնոց զեն-  
ման պատարագաւ թողութիւն չէք գըտ-  
նար մեղաց ձերոց . հին զոհի փճանալն ի-  
մացունել կ'ուզէր՝ և ոչ թէ Քրիստոսի  
հաստատած փրկարար խորհուրդն սրբոյ  
Պատարագի խափանել կամէր . քանզի և  
Առաքեալքն հանապազօր բեկանէին առ-  
տընին զհացն , որ էր Պատարագել ամէն  
օր : Ահա մօլորականաց որոգայթն միշտ  
այսպէս է սիրելիք . մտանեն ՚ի մէջ սուրբ  
գրոց , մէկ պարբերութիւն բանին առեալ  
և կամ երկու երեք բառ միայն ըստ քը-

մաց իւրեանց հանեալ վկայութիւն բերեն՝ թէ Վուաքեալն ասէ, « Աչ պիտոյ է վասն մեղաց Պատարագ » . ոչ յառաջ և աչ յետոյ չեն նայիր՝ թէ որու կը խօսի, և ի՞նչ բանի համար կը խօսի՝ նկատել և քննել չի կայ. եղուկ անմտութեան նոցա ասացից արդեօք, եթէ եղուկ ուն կընդրոց և պատիր բանից նոցա իրաւուն լոս նոցա առ ողաց ասոցից :

Ենդէ՞ս իշխեն ոմանք ասել թէ Առուրք Պատարագի հացն և գինին ոչ գոյափոխի ՚ի մարմին և յարիւն ՀՅիուուսի Քրիստոսի, այլ յիշատակ կամ օրինակ է եւ այլն : Վհաւասիկ դնեմք առաջի՝ ՀՅօհաննու աւետարանի 6 . գլխոյն բանսն, ուր ասէ Քրիստոս տէրն մեր ՚ի 48 . համարն . « Ես եմ հացն կենաց », և 50 . համ. « Ես յաէ հացն՝ որ յերկնից իջեալ է, զի որ ուտիցէ ոք ՚ի սմանէ՝ մի՛ մեռանիցի . Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ, եթէ ոք ուտիցէ ՚ի հացէ յայտնանէ կեցցէ ՚ի յաւիտեան . և հացն զօր ես տաց՝ մարմին իմ է, զօր ես տաց վասն կենաց աշխարհի : Վարտնչէին ընդ միմեանս հրեայքըն և ասէին, զիանդ կարէ առ տալ մեզ զմարմին իւր յուտել : Վոէ ցեսսա Յիսուս, ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ

կերիջեք զմարմին որդւոյ մարդոյ և արբ-  
ջեք զարիւն նորա , ոչ ունիք կեանս յան-  
ձինս . որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զար-  
իւն իմ , ունի զկեանս յաւիտենականս ,  
և ես յարուցից զնա յաւուրն յեանում . զի  
մարմին իմ ճշմարիտ կերակուր է , և ար-  
իւն իմ ճշմարիտ ըմպէլի է . որ ուտէ զմար-  
մին իմ , և ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեռ-  
ցէ և ես 'ի նմա : Արպէս առաքեաց զիս  
կենդանին հայր և ես կենդանի եմ վն հօր ,  
և որ ուտէն զիս , և նա կեցցէ վն իմ : Այս  
է հացե որ յերկնից իջեալ , ոչ որպէս կե-  
րան հարքն ձեր զմանանայն և մեռան , որ  
ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան Պ  
(յով . գլ . 6 . Համ . 48 . Ֆնշ - 60 . Համարն ) :

Ահա բացայաց իմացոց Քրիստոս տէ-  
րըն մեր 'ի հաստատելն զայս մեծ և սուրբ  
խորհուրդս , զորմէ նախ բանիւ վարդա-  
պետեաց , և ապա իրօք կատարեաց 'ի սք  
Աթոն վերնատունն 'ի վերջին ընթրիսն իւր ,  
առեալ զհացն ասաց . « Այս է մարմին իմ :  
և զբաժակն առեալ » « Այս է արիւն իմ :  
Աւրեմն մատութեամբ կարդա՛ զայս տե-  
զիս սուրբ Եւտարանին , և առս լժէ՝ որ-  
պէս յայտնապէս տպաւորէ 'ի միաս մեր Քա-  
Փրկիչն մեր : Յիրաւի զայս արարողութիւ-  
սուրբ խորհրդոյ կատարել միշտ յիշատակ

Եթող Եկեղեցւոյ իւրոյ սրբոյ . Ո՞արտըն-  
չողը ընդ այս քրիստոսաւանդ խորհուրդ  
սրբոյ Պատարագի՝ չեն ընդհատ , ոքք ասէ-  
ին յայնժամ , թէ՝ « Օ իարդ կարէ սա՝  
տալ մեզ զմարմին իւր յուտել » :

Եթէ ասիցէ ոք , ես եմ հովիւն քաջ ,  
ես եմ դուռն , կամ ես եմ ճանապարհ ,  
ասաց Քրիստոս , ուրեմն հովիւ կամ դու-  
ռն եղեւ Քրիստոս և կամ ճանապարհ ,  
ոչ համապատասխանեն այսր քանի նոյն  
փոխաբերական և նմանական բանք Տեա-  
ռն , ըստ որում մեք բանաւոր ոշխարք  
եմք նմա , և նա մեզ հովիւ , մեք հաւա-  
տալով ՚ի նա՝ մասնեմք ընդ դուռն երկ-  
նից արքայութեան . նա արեամք և խա-  
չիւն իւրով ճանապարհ երաց մեզ , ընդ  
որ զնալ պարտիմք , այսինքն՝ բազում նե-  
ղութեամք և չարչարանօք զելս փրկութե-  
հոգւոց մերոց գտանել , և այլն : Կաց ՚ի յօ-  
տարացելոց ՚ի քրիստոնէութենէ , և բաց  
՚ի յանհաւատից ոչ ոք կարէ վիճել ընդ  
Եկեղեցւոյ մերոյ վասն այսր բանի . ապա  
գուշասցի ազգ մեր , Եթէ ոք թերեհա-  
ւատեսցի ՚ի վերաց սուրբ խորհրդոյ Պա-  
տարագի , և այլ ընդ այլոյ բանս կարկա-  
տեսցէ առ ՚ի խոտել , և ՚ի թերեւս հանցէ  
զբանն Քսի , գիտացեալ ծանիցէ , թէ ա-

ղանդաւոր անհաւատ է անձն այն , յորմէ խորշիլ և իբրև 'ի յօձէ և 'ի պղծոյ չարէ հրաժարիլ հեռանալ , ըստ հրամանի Յառածոյ՝ թէ « Եշէք 'ի միջոյ նց և մեկնեցարուք ասէ Տէք և 'ի սկիզբո մի՛ մերձենայք . և ես ընկալայց զձեզ , և այն ։ ։ ։

Եւս ասեն՝ թէ լոկ հաւատով և միայն աւետարան կարդալով՝ փրկութիւն գտանեմք : Ո՞ի խաբիր , զի հաւատք առանց գործոց մեռեալ է (ասէ) սուրբ Առաքեալըն . ասոր ուամիկներն անգամ վկայեն , թէ հաց հաց բիւր անգամ լոկ անուն տալով՝ չի յագենար մարդ , այլ պէտք է առնուլ 'ի բերան և ծամել և ուտել և ապա յագենալ : Աւետարանը բռնէ գնա՛ , և ուրիշ բան մի ճանաչեր ըսողներուն բանի ալ այսպէս է . հին ժամանակը մէկ կերպ աղանդաւորք կային , որք թէպէտ ամենայն արատով լցեալ էին , բայց իրենց անունը անարատ դրեր էին . հիմա ասոնք ալ զիրենք աւետարանական կ'անուանեն , բայց գործքերնին բոլորովին հակառակ է սրբոյ Աւետարանին ըստ Տեառն բանի առ փարիսեցիս . « Յաճիք ընդ ծով և ընդ ցամաք առնել եկամուտ մի . և յորժամ լինիցի , առնեք զնա որդի գեհենի կրկին ևս բան

զձեղ” ( Տագ . իդ . 15 ), կարդալ պէտք է  
 սուրբ Աւետարանը , բայց որպէս կար-  
 դացին սուրբ Առաքեալք և անոնց աշա-  
 կերտ սուրբ Հայրապետակրն , անոնց հոգ-  
 ւովն կարդալու է . այս խօսքը իմս չէ Պը-  
 րիստոսի է . ուշը մեր յաւագ ուրբաթ  
 գիշեր երբ իրեն աշակերտացն վերջին քա-  
 րողի տուաւ , ըստ անոնց . “ Եւս և բա-  
 զում ինչ ունիմ ասել ձեղ , բայց ոչ կարէք  
 հանդարտել այժմիկ ” ( յով . ժկ . 12 ) .  
 Իսել կ'ուզէր , թէ այժմ չէք կարեր հաս-  
 կանալ հապա ե՞րբ . “ Երժամ եկեսցէ նա՝  
 Հոգին Ճշմարտութեան առաջնորդեսցէ  
 ձեղ զամենայն Ճշմարտութեամբ : Տե՛ս մի-  
 անդամ Առաքեալքն ՚ի բերանոց Պրիստո-  
 սի կը լրան սուրբ Աւետարանին բանքը ,  
 բայց ինքը Պրիստոս կ'ըսէ , երբ Հոգին  
 սուրբ գայ , առաջնորդեսցէ ձեղ ամենայն  
 Ճշմարտութեամբ . Առաքեալք նախ ընկա-  
 լան դՀոգի սուրբ , և հետեւաբար Հայ-  
 րապետք և Վարդապետք որ Եկեղեցւոյ .  
 ասոնք ուստի զսուրբ Աւետարանն Պրիս-  
 տոսի ՚ի Հոգւոյն սրբոյ , և ուսուցին  
 մեղ յետնոցս՝ ոչ միայն բանիւ՝ այլ և գը-  
 րով : Այս տեղ միաբղ բե՛ր ովլ ընթերցող  
 այն հտարակաց առածը , “ Որ առանց ա-  
 ռաջնորդի ընթանայ՝ ընդ կրունկն դառ-

նայ՞ . առաջնորդ ձեզ ունիցիք 'Քրիստոսի  
 առ մեզ ուղարկած 'Առաքեալքն՝ և անսնց  
 յաջորդող սրբազան Հայրապետներն և  
 Վարդապետներն , և անսնց հոգւովին կար-  
 գա՞ սուրբ Առեալարանը . մոլութեամբ և  
 մոլութեամբ խաւարեալ լայն ճանա-  
 պարհի հետեւողներն՝ որ իրենք զիրենք  
 լուսաւորեալ կը համբաւեն , անսնց հոգւ-  
 ովին մի կարդար զսուրբ գիրան . ասկա  
 թէ ոչ կոյր կուրի առաջնորդ Երկօքեան  
 անկանին 'ի խորիսորատ անհաւատութեան  
 'ի կորուսան յաւիտենական . այնային սեաց  
 կը յանդիմանէ Քրիստոս առելով . սույն  
 ուղ՝ որ 'ի քեզ է , խաւար է ու Առ հե-  
 տեւեաց քո սուրբ Լուսաւորչին՝ որ Եր-  
 կոտանան կերպ անտանելի չարշարանօք՝ և  
 'ի խոր վիրապին տանեւերեք տարի մնա-  
 լով՝ լուսաւորեաց զքեզ լուսով սուրբ  
 հաւատոյ քրիստոնէաթեան , և ուսոյց  
 զամենայն պիտոյն քրիստոնէութեան ան-  
 պակաս . և սուրբ Առեղեցի մեր նովին լու-  
 սով վարի մինչեւ ցայսօր պայծառապէս ,  
 և բնաւ երբէք 'ի սկզբանէ անտի տղան-  
 դապետ մը չէ կրցեր աղօտել և աւրել .  
 և այս լուսաւորչաւանդ դաւանութիւնը  
 և անսրատ կրօնքը ինչպէս մեր նախնիքը  
 մեզի աւանդեր են անաղօտաբար , մեք ևս

ոլարտիմք աւանդել յետնորդաց մերոց  
անարատութեամք . մեծ անմտութիւն է  
և յիմարութիւն , այսպիսի տիեզերահամ-  
բաւ սուրբ | ուսաւորիչ Հայրն մեր և նո-  
րին հոգեկեցոյց խրատներն թողուլ , և ու-  
րիշ անծանօթ և օտար խաւարեալքն մո-  
լութեամք մեզի լուսաւորիչ Ճանչնալ .  
Կատարինէ մայրապետի միոյ ախտաւոր սի-  
րոյն մոլեալն լուսաւորիչ չե կրնար ըլլալ :


Արդ՝ թողում Ճշմարտասիրացդ ողջ-  
մըտութեամք խորհիլ , և հաստատապէս  
գիտել , զի դրունք դժոխոց , այսինքն բե-  
րանք հերձուածողաց ոչ կարացին և ոչ  
կարեն յաղթահարել Հայաստանեայցա  
սուրբ | Եկեղեցի : Ապա միաբան աղաշես-  
ցուք զԱստուած՝ տալ մոլորամոացն այ-  
նոցիկ դարձ և զղջումն , զի մի խսպառ ա-  
նապաշխար կորիցեն 'ի կորուստն յաւի-  
տենական . այլ զղջացեալ իբրեւ զանառակ  
որդին ընկալցին զհայրական շնորհսն լու-  
սատուին հոգւոց մերոց սրբոյն Գրիգո-  
րի , որ յաւուրն դատաստանի հաւատա-  
րիմ ծառայն Աստուծոյ սուրբ | ուսաւո-  
րիչ Հայրն մեր՝ ասելոց է բազմաւ համար-  
ձակութեամք առաջի Քրիստոսի տեառն  
մերոյ՝ թէ « Ահա ես և մանկունք իմ » . իսկ  
ուրացողք և բաժանեալքն 'ի Հայոցս աղ-

գի եկեղեցւոյ և լուսաւոր շաւղացն՝ և նորին սրբազնասուրբ Հօրէն մերմէ, 'ի հարկէ զրկեալ մնան 'ի նոյն շնորհաց և արտաքոյ իւրեւ զյիմար կուսանիքն, որբ լոկոյ հաւատոյ իւրոյն ապաստանեալ, ընդ նմին առնուլ անհոգացան այլով ամանով իւզասուրբ կրօնի մերոյ քրիստոնէական բարեգործութեն, յայտ է թէ որպէս նոցա՝ և սոցա ոչ բացեալ լինի դուռն երկնից արքայութեն, և լսեն “ԱՅ Ճանաչեմ զձեզ”:

Եհաւասիկ որ ինչ 'ի մէնջ պահանջէր պարտիք հոգեւոր հայրութեան, ցուցաք աստէն սակաւուք համառօտակի առաջի առնելով զսուրբ գրոց հին և նոր կտակարանաց բանս, յորոց վերայ հաստատեալ է Հայաստանեայցս սուրբ եկեղեցի. և ըզ կարեւորսն գլխաւորաբար առաջի եղաք թէ վասն վերատեսչաց՝ ամենայն պատրաստութեամբ արթնութեան հսկել 'ի վերայ բոլոր վիճակի իւրեանց, և զարժանաւորսն անօրինել. թէ վասն վարդապետաց՝ բարւոք կրօնագիտութեամբ և ազդուատենախօսութեամբ յախոյեան հանդիսանալ ընդ դէմ հակառակամարտից մերս սուրբ Հաւատոյ. թէ վասն քահանայից՝ առ 'ի բարեկարգ կառավարութիւն հօտին Քրիստոսի, թէ վասն եկեղեցականաց

բնաւից սարկաւագաց՝ դպրաց՝ վարժապետաց և ամենայն ուսումնականաց սրբութեամբ և համեստութեամբ հայելի բարի վարուց լինել սարադրելոց իւրեանց . թէ վասն իշխանաց՝ առ ՚ի աշալուրջ աընտեսութիւն և յարժանավայելն հոգատարութիւն ՚ի վերայ ժողովրդոց . և թէ վայ ժողովրդականաց՝ առ ՚ի յարդարել զանձինս իւրեանց ՚ի պարտուպատշաճն . թողումք ասլա և զմնացորդսն ձերդ բարեխոհ իմացականութեան ըստ ստուածատուր խոհականութեան իմաստասիրել :

Կողաքէն ո՛վ ուսաւորչեան համազգիք մեր . լաւ ՚ի միտ առեալ զհամառօտութիւն գրուածոյս այսորիկ , և ամենայն առաքինսկան բարեմասնութեամբք հոգւց և մարմնաց ամրացեալ , զգոյշ լերուք ՚ի խմօրոյ ոււտ անուն քրիստոնէից և ՚ի ոււտ քարոզութեանց նոցա . որ բոլորովին էնզգծաւորութիւն է և խաբէութիւն . ոչ մերովն և եթ զհետ երթիցուք , որ աներկ բայ տանի զմեղ առ լոյսն Քրիստոս , որ Ճշմարիտ գլուխ է սրբոյ Եկեղեցւոյ իւրոյ , որում տացուք փառք պաշտօն և երկրագութիւն յաւիտեանս՝ ամէն :



||-မိန္ဒဗုဒ္ဓဘာသာ ပြုသူများ အတွက်  
၏ လုပ်သမဂ္ဂများ ဖြစ်သော မြတ်များ  
လုပ်သမဂ္ဂ အတွက်၊ ရှုပ်သမဂ္ဂ မြတ်များ  
မြတ်မြတ် အတွက် ဖြစ်သော မြတ်များ  
အရှင်သမဂ္ဂ ပြုသော မြတ်များ ဖြစ်သော  
မြတ်မြတ် အတွက် ဖြစ်သော မြတ်များ (ပြန်လည် ပါ 17)。





